ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 30-ին, կիրակի.—Տօն Գիւտի Գոտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

*
* *

Սեպտեմբերի 1-ին, երեքշաբթի.—Այսօր, հետմիջօրեի ժամը 14-ին, ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Լիբանանի հայոց թեմի առաջնորդ տ. Տաճատ արքեպ. Ուրֆալյանը: Երևանի օդանավակայանում սրբազան հորը դիմավորեցին տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և Ղազարոս սրկ. Կյուրեղյանը:

*
* *

Սեպտեմբերի 3-ին, հինգշաբթի.—Երեկոյան ժամը 21-ին Մայր Աթոռ վերադարձավ, Հարավային Ամերիկա կատարած իր ուղևորությունից, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը:

*
* *

Սեպտեմբերի 6-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և քարոզում՝ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը՝ «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զքեզ» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Սեպտեմբերի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է այցելությունը Ցեյլոնի բուդդայական հոգևոր պետի և նրա երկու ուղեկիցների:

*
* *

Սեպտեմբերի 10-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո:

*
* *

Սեպտեմբերի 11-ին, ուրբաթ.—Այսօր, ժամը 14-ին, Երուսաղեմ մեկնեց, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ մասնակցելու համար Երուսաղեմում ամենապատիվ տ. Եղիշե պատրիարքի նախագահության ներքո կազմված եպիսկոպոսական հանձնաժողովի նիստերին, որը քննարկելու է Մայր Մաշտոցի և Ջեռնադրության Մաշտոցի կրճատման հարցերը՝ այն Վեհափառ Հայրապետին ներկայացնելու հաջորդ եպիսկոպոսաց ժողովի գումարումից առաջ:

Նույն օրը, երեկոյան ժամը 21-ին, Ռումինիայից Մայր Աթոռ ժամանեց պրոֆ. Հ. Ճ. Սիրունին:

*
* *

Սեպտեմբերի 12-ին, շաբաթ.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին են այցելում տ. Բաբգեն եպս. Վարժապետյանը և Կարապետ Սյուլահյանը՝ ԱՄՆ-ից:

*
* *

Սեպտեմբերի 13-ին, կիրակի.—Խաչվերաց.

Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Հավարտ ս. պատարագի քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Երանի է նոցա, որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից» բնաբանով: Իր քարոզի մեջ Վեհափառ Հայրապետը այս առթիվ ոգեկոչում է նաև Այնթապի հերոսամարտի 50-ամյակի առիթով զոհվածների խնկելի հիշատակը: Ապա Վեհափառ Հայրապետը նախագահում է հոգեհանգստյան արարողությանը, որին ներկա են լինում ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Լիբանանից, Սիրիայից ժամանած Այնթապի հայրենակցական միությունների պաշտոնական ներկայացուցիչներ և հայրենաբնակ բազում այնթապցիներ:

Ս. պատարագի և հոգեհանգստյան արարողությանը ներկա են լինում նաև ամերիկահայ, ֆրանսահայ և լիբանանահայ ուխտավորական հոծ խմբեր, որոնք Վեհարանում աջահամբույրով ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունները: Հայոց Հայրապետը ջերմորեն ողջունում է ուխտավորական խմբերի ժամանումը Մայր Աթոռ և, խոսք առնելով, շեշտում է՝ Մայր Աթոռ ս. Էջմիածին և մայր հայրենիք ուխտի գալու հոգևոր և հայրենասիրական նշանակությունը և հորդորում է՝ ապրել միշտ Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնությամբ և վերածնված հայոց աշխարհի վառ զգացումներով: Ուխտավորներից շատերը ջերմ երախտագիտության և շնորհակալության խոսք են ասում Հայոց Հայրապետին՝ սրտագին ընդունելության և հայրենաշունչ Նրա պատգամների համար:

Երեկոյան ժամը 16-ին Վեհափառ Հայրապետը նախագահում է Մայր տաճարում Խաչվերացի թափորին, մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանության և ի ներկայության խուռներամ հավատացյալների:

*
* *

Սեպտեմբերի 14-ին, երկուշաբթի.—Մեռելոց.

Մայր տաճարում պատարագեց տ. Հովհաննես քհն. Մարուքյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգիստ՝ «վասն հանգչելոց»:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետը «Սասուն» ճաշարանում նախագահում է Նոր Այնթապի անվանակոչության առթիվ կազմակերպված համայնթապցիների ճաշկերույթին՝ Իր օրհնությամբ և հայրենաշունչ ճառով ոգևորելով բոլոր ներկաներին:

*
* *

Սեպտեմբերի 15-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ են ժամանում Կիլիկյան Աթոռի միաբաններ տ. Ղևոնդ արքեպ. Չեպելյանը և տ. Տիրայր վրդ. Փանոսյանը:

Երևանի օդանավակայանում հարգելի հյուրերին դիմավորեցին տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և Արարատ սրկ. Գալստյանը:

*
* *

Սեպտեմբերի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզեց տ. Տաճատ արքեպ. Ուրֆալյանը՝ «Առ զխաչ քո և եկ զկնի իմ» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Սեպտեմբերի 21-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Մայր տաճար այցելեցին Երևանում հյուրաբար գտնվող Լիոնի քաղաքագլուխ Լուի Պրադելը, քաղաքապետության խորհրդի անդամներ, Լիոնի նահանգի Ֆրանս—ՍՍՀՄ բարեկամության ընկերության նախագահ, իրավագետ Ամբրը և ուրիշներ:

Հարգելի հյուրերը, որոնց թվում էր նաև Լիոնի հայ համայնքի ծանոթ ազգայիններից Նապոլեոն Պուլլաքյանը, հանգամանորեն ծանոթացան Մայր տաճարի պատմությանը և ապա այցելեցին Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստի թանգարանը:

Այնուհետև Վեհարանի հանդիսությանց դահլիճում հարգելի հյուրերին ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Ն. Սրբությունը և Լիոնի պարոն քաղաքագլուխը ողջույնի և բարիգալստյան ճառեր և հուշանվերներ փոխանակեցին:

Վերջում հյուրերը հյուրասիրվեցին Վեհարանի այգու ընտիր մրգերով:

Լիոնի պարոն քաղաքագլուխը և իրեն ընկերակցող պաշտոնական ուղեկիցները հրա-

ժեշտ առան Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից լավագույն տպավորություններով:

*
* *

Սեպտեմբերի 27-ին, կիրակի.—Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Տիրայր վրդ. Փանուսյանը: «Հայր մեր»-ից առաջ տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը ընթերցում է Ներսես Ե կաթողիկոս Աշտարակեցու ծննդյան 200-ամյակին նվիրված 1970 թվականի փետրվար 13 թվակիր հայրապետական կոնդակը: Հավարտ պատարագի քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Ինձ կեանք Քրիստոս է, և մեռանել՝ շահ» բնաբանով: Իր քարոզում Վեհափառ Հայրապետը ոգեկոչում է նաև հիշատակը Ուրֆայի հերոսամարտում զոհվածների:

Քարոզից հետո տեղի է ունենում հոգեհանգիստ՝ Ուրֆայի հերոսամարտի զոհվածների հիշատակին:

*
* *

Սեպտեմբերի 28-ին, երկուշաբթի.—Այսօր, հետմիջօրեի ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, Բեյրութ մեկնեց Լիբանանի հայոց թեմի առաջնորդ տ. Տաճատ արքեպ. Ուրֆալյանը: